

ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԻ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ-ԱՐՇԵՍՏԱՆՈՅԸ (1920-1927)

Անդրանիկ Տազետեան
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Օսմանեան Կայսրութեան պարտութեամբ՝ Միջին Արեւելքի հայոց աքսորավայրերուն յաղթական դաշնակից բանակներու կողմէ գրաւումով եւ Զինադադարի հռչակումով, հայ գաղթականութեան մնացորդացի, խլեակներու փրկութեան, առեւանգեալներու վերատիրացման աշխատանքը թափ կ'առնէ, կարելիութիւնը կ'աւելնայ՝ փրկագործութեան, օգնութիւն հասցնելու հայ թշուառներուն, որոնց մասին հայ իրականութեան մէջ աւելի լայնածիր գրութիւններ ու ազգը փրկելու կոչեր հրատապ կը դարձնեն ազատարարութեան աշխատանքները՝ յարաբերաբար բարենպաստ պայմաններու յառաջացումով:

...Հարիւր հազարաւոր որբերու եւ կիներու ազատագրումը, զինադադարի հռչակումին առաջին օրերուն իսկ հրամայողական բարոյական պարտադրութիւն մը ճանչցուած էր բոլոր հայերուն կողմէ:

... անոնց ազատագրութիւնը կը դառնար մարդկային, ազգային եւ կրօնական պարտականութիւն մը... անոնց միջոցաւ անարգուած, անպատուուած կը տեսնէին հայութիւնը իր ամբողջութեան մէջ, հետեւաբար պարտադրանքը կը ստեղծուէր այդ անարգանքը սրբելու ազգութեան ճակատէն: Այս զգացումները կը տիրապետէին հայերուն եւ իւրաքանչիւր հայ, ինչ պայմաններու եւ դիրքի մէջ ալ գտնուէր, իր շրջապատին մէջ կ'աշխատէր եւ կը գործէր անոնց ազդեցութեան տակ: Թուրքի մը, արաբի մը, քիւրտի մը քովէն հայ որբ մը կամ կին մը փախցնելը պարտականութիւն կը համարուէր, իւրաքանչիւր հայու¹:

Ընթացք կ'առնէր խլեակներու հոսք մը դէպի Հալէպ: Վերջինս Պէյրութէն ու Դամասկոսէն աւելի հիմնական կայան կը դառնար եւ կը վերածուէր գաղթականներու մայրաքաղաքի: Հալէպ ուղղուող այս հոսքը պիտի չդադրէր, քանի որ յառաջացեր էին առեւանգեալ որբեր եւ աղջիկներ, հարէմներու մէջ ծառայեցուած հայ խլեակներ ազատագրելու գործով զբաղող անհատներ, հարազատներ եւ կազմակերպուած ջոկատներ: Կազմակերպուէր էին դրամահաւաքներ ու հանգանակակոթիւններ՝ փրկագիններ վճարելու համար: ՀԲԸՄը 1919ին հիմնէր էր «Ազատագրումի Հիմնադրամ»ը². Աքապա-Քերէքի շրջանին մէջ Յովհաննէս Գլըճեանի, Հորանի շրջանին մէջ Լեւոն Եօթնեղբայրեանի խումբի, Տէր Զօրի կողմը՝ Հերեանի միջոցով կը կատարուէին որոնումներ ու ազատագրումներ³:

Տակաւ Հալէպ կը սկսին հաւաքուիլ խլեակներու բեկորներ: Ազատագրուած «կիներուն ... ջախջախիչ մեծամասնութիւնը... ենթարկուած են... ոչ միայն բռնադատեալ աշխատանքի, ծեծերու, հարուածներու, այլատեսակ բռնութիւններու ճնշումին, բայց մանաւանդ բարոյական սարսափի մը: Սպաննուելու վախին տակ ապրած են ամէն օր...»⁴:

Զարհուրելիօրէն թշուառ պատկեր մը կը յառաջանայ Հալէպի մէջ. ամէնէն աւելի աչքառու թշուառութիւնը մերկութիւնն է, բառին ամենալայն իմաստով. հազարաւորներ անկողին եւ ծածկոց չունին եւ ստիպուած են գետինը հողին վրայ պառկիլ. հազարաւորներ իբր զգեստ պատառոտուն աղտոտ քուրջեր ունին միայն...⁵:



ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐ

Հալէպը ունէ՞ր որբանոց, չունէր սակայն միջոցը՝ առեւանգեալ այս կիները ամոքող, կազդուող, վերակենսաւորող հաստատութիւնը: Եղածները, ինչպէս Հալէպի Օրիորդաց Միութեան (ՀՕՄ) Ապաստանարանը բաւարար չէին, կամ պահանջքը բաւարարող արդիւնաւէտութիւն չունէին:

Այս ծիրին մէջ պէտք է տեսնել Հալէպի մէջ ապաստանարան մը հիմնելու ՀԲԸՄի ծրագիրը:

«Հալէպի մէջ Ապաստանարան.- Կեդր. Վարչ. Ժողովը [ԿՎԺ] կարեւոր որոշում մը տուած է որ կը լրացնէ մեծ պակաս մը» գրութեամբ, *Միութիւն* կը ծանուցանէր ԿՎԺի նոր նախաձեռնութիւնը.-

Նկատելով որ հարէմներէն եւ անապատի հեռաւոր խորշերէն հայուիներու եւ որբերու ազատագրումի գործը մին է այն նուիրական պարտականութիւններէն որ կը խօսին ամէն հայու սրտին, եւ սակայն նկատելով որ տեղ տեղ կ'առարկուի թէ ատոնց ազատագրումը հարկ կ'ըլլայ յաճախ յետաձգել, այն պատճառով որ այդպիսիներու հոգատարութեան միջոցները կը պակսին, որով երբեմն նոյնիսկ ազատագրուածներ անօթի եւ մերկ կը վերադառնան իրենց մահմետական տէրերուն մօտ, Կեդր. Ժողովը որոշում կայացուցած է Հալէպի մէջ հաստատել մասնաւոր Ապաստանարան-Աշխատանոց մը ... ուր հետզհետէ պիտի ընդունուին այդ շրջանին մէջ ազատագրուած եղերաբախտ հայուիները եւ որբերը, հոգալով անոնց բոլոր պէտքերը եւ գործ տալով միեւնոյն ժամանակ յարակից աշխատանոցին մէջ...⁶:



Այս ուսումնասիրութեամբ լուսարձակի տակ կ'առնենք Հալէպի ՀԲԸՄ Ապաստանարան Աշխատանոցը, որ գործած է 1919-1927 շրջանին⁷:

ՀԱԼԷՊԻ ՕՐԻՈՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԸ

ՀՕՄԻ «անխոնջ ջանքերով» կազմուած Հալէպի Ապաստանարանը կը գործէր 1919 Յունիսէն. եղած էր ժամանակ երբ օտարներէ հաւաքուած մինչեւ 150 որբեր եւ աղջիկներ հոգացուեր էին հոն: Սակայն, ՀՕՄԻ համար հեզասահ գործ չէր ասիկա. եթէ բարոյական կորովը կար, անբաւարար էին սակայն նիւթական միջոցները: Միս կողմէն, ԿՎԺն շահագրգռուած էր Հալէպի մէջ սեփական ապաստանարան մը ունենալով, որուն առնչութեամբ 25 Դեկտեմբեր 1919 թուակիրով Հալէպի ՀԲԸՄ Մասնաժողովին ան թելադրանքներ կը կատարէ⁸:

Կը թուի թէ նման կեդրոնի մը հաստատման առարկայական տուեալները առկայ էին, որովհետեւ կարճ ժամանակ ետք, Հալէպի Մասնաժողովի ատենապետ Արմենակ Մազլումեան՝ ԿՎԺին յղուած 8 Յունուար 1920 թուակիր նամակով, յանուն Մասնաժողովին, «ազգօգուտ» կը համարէ ձեռնարկը եւ անցնելով գործնականի կը բանակցի ՀՕՄԻն հետ:

Հարցական կը մնայ թէ ԿՎԺն իր ծրագրին համար ի մտի ունէ՞ր ՀՕՄԻ Ապաստանարանը թէ՞ ոչ: Վերջինս անձանօթ չէր ՀԲԸՄին⁹, որ 20 եգիպտական ոսկիի ամսական նպաստ կը կատարէր հաստատութեան, հանդերձանք ու օճառ կը հայթայթէր, նուիրեր էր գուլպայի 9 մեքենայ, գունաւոր մանած բուրդ եւն.¹⁰:

Յամենայնդէպս, Հալէպի Մասնաժողովը կը թուի թէ գործնական կը գտնէ այդ հաստատութիւնը ձեռք բերելու կարելիութիւնը եւ կը լծուի «նախնական խորհրդակցութիւններ»ու՝ Ռուբէն Հերեանի¹¹, գնդապետ Գոլուքարի¹², առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քիւն. Եսայեանի¹³

Եւ ՀՕՄԻ Գործադիր Մարմնին հետ: Եթէ Հերեան եւ Գնդ. Գոլուքար կը գնահատեն ձեռնարկին բարերար դերը եւ կը խոստանան աջակցիլ անոր յաջողութեան (Գնդ. Գոլուքար կը խոստանայ նաեւ՝ պատասպարեալներուն տալ գաղթականներու յատկացուած սնունդի բաժինը եւ ի հարկին նիւթապէս ալ օգնել), ապա Յարութին քահանայ եւ ՀՕՄը հաւանութիւն կը յայտնեն ծրագրին, մանաւանդ որ «ապաստանարանի մատակարարութեան հոգէն կ'ազատուին»: Յարութին քահանայ Մասնաժողովին տրամադրութեան տակ անվճար կը դնէ Ազգային Առաջնորդարանին պատկանող Ապաստանարանին շէնքը: Ասիկա կը լուծէր ծրագրին համար անհրաժեշտ տեղի եւ տարածութեան խնդիրը: Կը մնային հաստատութիւնը փոխանցելու, շէնքը նորոգելու, կանոնաւորելու, ընդարձակելու եւ ներկայանալի ձեւի վերածելու հարցերը: Պէտք էր նաեւ՝ ԿՎԺի տեսլականին համապատասխանող յաւելեալ գործառոյթ տալ ապաստանարանին:

Կարճատեւ խորհրդակցութիւններու աւարտին, համաձայնագիրը կը կնքուի 14 Յունուար 1920ին: ՀՕՄի կողմէ՝ զայն կը ստորագրեն ատենադպրոսի Արուսեակ Մարգարեան եւ ատենապետուհի Ա. Նազարեան, իսկ Մասնաժողովին կողմէ՝ ատենադպիր Գ. Խանճեան եւ ատենապետ՝ Արմենակ Մազլումեան: Գրաւոր արձանագրութիւնը կը հաստատէ Յարութին քահանան:

Գոհունակ՝ ձեռք բերուածէն, Մասնաժողովն ու ՀՕՄը «ուրախացնելու համար պատասպարանի որբերն ու աղջիկները կաղանդի ծառ մը եւ սեղան մը» կը սարքեն, որուն ներկայ կը գտնուին Նպաստամատոյցէն Տոքթ. Լեւալըթ, Յարութին Քինյ., Հայ Ազգային Միութեան անդամներ, Հերեան, Մասնաժողովին դիւանը, ՀՕՄի անդամուհիներ եւ ուրիշներ: Այս առթիւ, պատասպարեալներուն եւ «դպրոցի որբ ուսանողներուն կաղանդի առթիւ մէյ-մէկ զոյգ գուլպայ» կը բաժնուի:

Նոր՝ հաստատութիւնը պիտի կոչուէր «ՀԲԸՄիութեան Ապաստանարան-Աշխատանոց»: Անոր մատակարարութեան եւ վարչական հոգը պիտի պատկանէր Մասնաժողովին, մինչ ՀՕՄը պիտի վարէր պատասպարեալներուն մաքրութեան, առողջութեան եւ հանդերձեղէնի գործերը¹⁴ Մասնաժողովին հսկողութեան ու պատասխանատուութեան տակ:

Ըստ ծրագրի, հաստատութեան մէջ պիտի պատասպարուէր 50 հոգի: Զայն կառավարող մարմինը պիտի ունենար ընդհանուր ներքին հսկող մը¹⁵, օգնականուհի մը¹⁶, դռնապան ու սպասաւոր այր մը¹⁷, այր պաշտօնեայ մը՝ գնումներուն համար¹⁸ եւ խոհարարուհի մը¹⁹, իսկ առողջապահական խնդիրներուն համար՝ այցելու բժիշկ մը²⁰, մինչ ծանր հիւանդները պիտի դրկուէին Հալէպի Քաղաքապետական Հիւանդանոցը: Լուացքն ու զանազան աշխատութիւնները պիտի ընէին պատասպարեալները, իսկ

տոմարներու եւ ընդհանուր վերահսկողութիւնը պիտի կատարէին Մասնաժողովին անդամներն ու քարտուղարը:

Ըստ Մասնաժողովի նախահաշիվին, իւրաքանչիւր պատսպարեալի ամսական մէկ ոսկիի ուտեստեղէնի²¹ ծախս մը կը նախատեսուէր: Կը նախատեսուէր նաեւ բաղնիքի ու լուացքի համար ամսական 10 ոսկիի ծախս, նոյնքան մը՝ բժշկական խնամքի, 5 ոսկի՝ ջեռուցման ու լուսաւորութեան, եւ 3 ոսկի՝ այլեայլ ծախսերու: Ուստի, հաստատութեան ամսական ընդհանուր ծախսը պիտի ըլլար 9000 ե.դ.: Ասոր վրայ պիտի գար աւելնալու Աշխատանոցին համար նախնական դրամագլուխին գումարը՝ 12,000 ե.դ., ընդհանուր գումարը վերածելով տարեկան 120,000 ե.դ.՝ կամ 1200 ե. ոսկիի:

20 Յունուար 1920 թուակիր նամակով ԿՎԺն կը փութայ վաւերացնել ծրագիրն ու նախահաշիւը, կը թելադրէ ներքին կանոնագրի մը ուրուագծումը եւ խնամակալութեան մը կազմութիւնը, ու 5 Փետրուար թուակիրով կը վաւերացնէ կայացած համաձայնութիւնը²²:

Գործնական քայլերու անցնելով, Մասնաժողովը պաշտօնապէս կը դիմէ Յարութիւն քահանային՝ կատարելու հարկ եղած ձեւակերպութիւնները եւ փոխանցելու շէնքը որուն, նորոգութիւններուն ծախքերը պիտի հոգար Մասնաժողովը²³:

ՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէտք է ըսել, որ նախօրինակը կար Ապաստանարան-Աշխատանոցին. ՀԲԸՄիութիւնը ունէր փորձառութիւնը նման հաստատութիւններու: Արդարեւ, ան 1918 Փետրուարին Պաղտատի մէջ ունէր արդէն «Տարագրեալներու Այրիանոց-Որբանոց» մը²⁴, Փոր Սայիտի մէջ՝ «Այրիանոց Աշխատանոց» մը²⁵, ուր աւելի ետք փոխադրուել էին Պաղտատի Այրիանոցէն հարիւրաւոր այրիներ եւ անոք աղջիկներ, նաեւ՝ Դամասկոսի «Հայուհեաց-Ապաստանարան»ը, ուր ապաստանած էին 120 այրիներ եւ աղջիկներ²⁶: Անդին՝ Ատանայի մէջ, 5 Յունիս 1919ին հաստատուած էր գործատուն մը, որ կը ծառայէր իբրեւ աշխատանոց անոք եւ կարօտ այրիներու²⁷: Յատկանշական է որ ապաստանարան-աշխատանոցին անհրաժեշտութիւնն ու օգտաշատութիւնը նկատի առնելով, ԳՎԺն աւելի ետք նման աշխատանոց պիտի հիմնէր Սելանիկի մէջ²⁸: Աւելի ետք, երբ 1925ի սկիզբին Նիր Իսթ Բիլիֆը կրճատեց իր գործունէութիւնը, ՀԲԸՄը դուրս մնացած որբանոցա-յիներէն ամէնէն անոքներուն (որոնք տակաւին ինքնաբաւ վիճակի մը չէին հասած) համար երկու ձեռնարկներ հաստատեց Պէյրութի եւ Հալէպի մէջ, որոնք կոչուեցան «Ինքնօգնութեան Կայաններ»²⁹:

Կային եւ այլապատկան նման հաստատութիւններ, ինչպէս՝ 1919ին Համայի մէջ անգլիացիներու հաստատած «Որբանոց-Այրիանոց»ը³⁰:

ՀԲԸՄը ունէր նաեւ որբանոց-արհեստանոցներու ցանց մը, ինչպէս Հալէպի Արհեստանոց-Որբանոցը, որուն բացումը կը կատարուի Սեպտեմբեր 1921ին, ուր առաջին հերթին կ'ընդունուին 100 որբեր³¹: 1922ին Արհեստանոցի կարգադրութիւններ կը կատարուին նաեւ Երուսաղէմի որբանոցին համար³²: Մտածում կը յառաջանայ նաեւ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1922ին Պոլիս փոխադրել շուրջ 275 չափահաս որբուիներ եւ հոն եւս հաստատել արհեստանոց մը³³:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՆՊԱՏԱԿԸ

Ջարմանալի պիտի ըլլար, մտածել սակայն, թէ ԿՎԺն փափաքէր յաւելեալ նիւթաբարոյական պարտաւորութիւններ ստանձնել ապաստանարանային աշխատանքի մը համար, որ արդէն կը տարուէր եւ որուն - ինչպէս տեսանք - ան նիւթապէս կը սատարէր: Առնուազն երկու դրդապատճառ կրնար ունենալ ԿՎԺն՝ ստանձնելու համար Ապաստանարանը. 1՝ Ան պիտի ուզէր Ապաստանարանին առաքելութեան ծիրը ընդարձակել՝ բարեփոխելով անոր գոյութեան նպատակները եւ գործառոյթը, 2՝ իր տնօրինած գաղթականական տեղայնական հաստատութիւններուն համակարգին պակսող օղակը գոյացնել:

Իրողապէս, ԿՎԺն կը ծրագրէր ՀՕՄի ապաստանարանը ձեռք բերելով անոր գործնական այլ գործառոյթ մը եւս տալ. Ապաստանարանը պիտի դառնար «*հանգրուան մը՝ հաւաքուած որբերուն եւ անտիրական կիներու եւ աղջիկներու, որ պրեն մը հոն մնալէ յետոյ, մաքրուած, առողջացած ու կազդուրուած, աստիճանաբար պիտի ղրկուէին իրենց վայրերը, անոք չափահասները՝ Միութեան որբանոցները, ազգական ունեցող մեծերը՝ իրենց պարագաներուն, իսկ բոլորովին անտէրերը՝ Աշխատանոցի բաժնին մէջ իրենց յարմար գործով մը պիտի զբաղուէին*»³⁴, նորեր պիտի գային մեկնողներուն տեղ եւ ամոքումի ու կազդուրումի անխը պիտի արագ դառնար՝ նորեր փրկելու եւ զանոնք հայ հաւաքականութեան վերամուծելու:

Այլ խօսքով, արհեստանոցը նաեւ նպատակ պիտի հետապնդէր «*հաստատութեան մէջ ընդունիլ ազատագրուած հայուիներու որբերը... [անոնցմէ] անտիրական կիներու եւ աղջիկներու գործ հայթայթել Աշխատանոցին մէջ*»: Ըստ ծրագրի այդ 'գործեր'ը պիտի ըլլային բուրդ մանել, գուլպայ հիւսել, ասեղնագործութիւն, ձեռագործ ու կար: Այս աշխատանքներուն համար Ապաստանարանը ունէր 1 կարի մեքենայ, 9 գուլպայի մեքենայ, 6 նստարան, 3 մեծ ու փոքր սեղան³⁵:

ՅԱՆՁԱՆՁՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Ինչպէս տեսանք, Յունուար 1920ին, Մասնաժողովը ՀՕՄի հետ համաձայնութեան գալով յանձն կ'առնէ Ապաստանարանի մատակարարման գործը, մինչ ՀՕՄին կը թողու հաստատութեան բարոյականին եւ Աշխատանոցին բաժինը³⁶: Փետրուար 1920էն

հաստատութիւնը կը դառնայ ՀԲԸՄիութեան սեփական հաստատութիւններէն մին:

Նոր կացութեամբ ՀԲԸՄը հաստատութեան տարեկան վարկ կը վաւերացնէ՝ 1200 եգիպտական ոսկի, որուն վրայ պիտի գար աւելնալու Ֆրանսական Ներգաղթի Տնօրէնութեան կողմէ «Հոգեւոր մէջ պատրաստուած ապուր»ը³⁷, առաւել՝ ՀՕՄի միջոցաւ Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին կողմէ պատսպարեալներու թիւին համեմատ տրուած հացագինը³⁸: Պատսպարեալները շաբաթական երեք անգամ մտելէն սնունդ եւ «առատ հաց» կը ստանային: Կենցաղային կարիքներուն համար Ապաստարանը ունէր ՀՕՄի, ՀԲԸՄիութեան, Ամերիկեան Կարմիր Խաչի եւ Հալէպի Առաջնորդարանին հայթայթումներով յառաջացած իրեր³⁹:

14 Մարտին կը տեղեկագրուի Ապաստանարանին համար յառաջացուած խնամակալութեան մասին. Մասնաժողովը՝ յանձինս Գ. Խանճեանի, Տոքթ. Յովհաննէս Գլըճեանի եւ Մանուկ Սահակեանի ներկայ էր անոր մէջ, մինչ ՀՕՄը՝ Աղանի Նազարեանի եւ Բոզա Պայրամեանի:

Յանձնաձումը կ'ըլլայ սահուն, մանաւանդ որ մասնակի էր ան: Սակայն, կամքէ անկախ պատճառներ կը դժուարացնեն եւ կը դանդաղեցնեն հաստատութեան նոր ընթացքը. Տէր Զօրի եւ այլ վայրերու քաղաքական պայմաններու վատթարացումով որբահաւաքութեան գործը միառժամանակ կը կասի, երթելիութեան եւ հաղորդակցութեան խզումներ կը յառաջանան, անկարելի կը դառնայ հումքի ստացումը: Արհեստանոցը կը բանի իր նուազագոյն կարողութեամբ. ապաստանեալները եղած բուրդը մանելով եւ իրենց անձնական կարերը ընելով կը զբաղին⁴⁰: Մինչեւ 10 Հոկտեմբեր 1920՝ չեն հասնիր նաեւ ԿՎԺի խոստացած պատսպարեալներուն հագուստեղէնն ու կօշկեղէնը՝ երթելիութեանց ընդհատումին պատճառով⁴¹: Ապաստանարանը կ'արձանագրէ վերիվայրումներ. Դեկտեմբեր 1920ին անկէ փախուստ կու տան 3 հոգի, ինչ որ լուսարձակի տակ կը դնէ հսկողութեան խնդիրը:

ԿՎԺն կ'երկմտի շարունակել ստանձնել յանձնառութիւնը. 9 Նոյեմբեր 1920 թուակիրով ան կը յայտնէ Մասնաժողովին թէ ներկայ պայմաններու մէջ մտադիր չէ շարունակել, բացատրելով թէ եղած զոհողութիւնը համապատասխան արդիւնք չի տար, գործը շեղած է իր նախնական բուն առաջադրութենէն, բայց կարելի կը գտնէ միառժամանակ վարկաւորել զայն:

ԿՎԺն գոհ չէր Ապաստանարանին վարչակառավարումէն. պայմաններն ալ չէին օգներ որ լիարժէք գործէր ան իր առաքելութեամբ: ԿՎԺին պատկերացումով, Ապաստանարանը դարձող անիւ մը պէտք էր ըլլար, ուր եղեռնէն հարուածուածներ գային ամոքուելու եւ վերագտնելով իրենց կազդոյրը հեռանային՝ տեղ բանալով իրենցմէ աւելի կարիքաւորներուն:

Անդին, Հալեպի մասնաժողովը լաւապէս կը տեսներ գործին ծանրութիւնը, կարեւորութիւնը եւ այն վարկը զոր Ապաստանարանը կ'ապահովէր Միութեան, առանց նիւթական ծանր յանձնառութեան: Ան հիմնական անյաջողութիւնները վերագրելով կացութեան, Մասնաժողովին Բ. ատենապետ Ռուբէն Էզաճեանի ստորագրութեամբ⁴², 1920 Դեկտեմբերի նամակով դիտել կու տար ԿՎԺին, որ Նապաստամատոյցի, Առաջնորդապատկան շէնքի վարձք չտալու եւ այլ կողմնակի օգնութիւններէ ետք Ապաստանարան-Աշխատանոցը ընդամէնը տարեկան 500-600 ոսկիի ծախք մը կ'ըլլար ՀԲԸՄին՝ 1200 ոսկիի նախահաշիւին փոխարէն: Իսկ Ապաստանարանին կատարած բարերար դերը եւ մատուցած բարոյական վարկը՝ մեծ էին ՀԲԸՄի համար:

Մասնաժողովին եւ ԿՎԺին միջեւ կը թուի յառաջանալ լուր համախոհութիւն մը, որով վերջինս կը շարունակէ ՀԲԸՄի սեփականութիւն նկատել Ապաստանարանը, իսկ Մասնաժողովը նկատի կ'ունենայ որ «պատասպարեալները երկար ատեն» չմնան հաստատութեան մէջ «եւ միշտ աւելի կարօտլեալները եւ նորերը յաջորդեն հիներուն», թերեւս նաեւ՝ աւելի մօտէն հետեւի Ապաստանարանին խնդիրներուն:

Պէտք է ըսել, սակայն, որ Մասնաժողովը ծանր պարտականութեանց տակ էր՝ եթէ նկատի առնենք որ Հալեպի մէջ ՀԲԸՄի սեփականութիւնն էին զանազան հանրային հաստատութիւններ, որոնց բոլորին անմիջական յանձնառութիւնը կ'իյնար տեղի Մասնաժողովի անդամներուն վրայ: Անդամներուն թիւը ըստ երեւոյթին մեծ չէր եւ ատոր համար ալ ԿՎԺն աւելի քան անզամ մը թելադրական կ'ըլլար որ Մասնաժողովը պարտի անդամարշափ ձեռնարկել՝ Հալեպի մէջ:

Յուլիսին, ֆրանսական բանակին Տէր Զօր մտնելու առիթէն օգտուելով հայ կառապաններու հետ Հալեպ կը հասնին 39 կիներ եւ փոքրիկներ, որոնցմէ բոլորովին անպաշտպան եղող 20 աղջիկներ եւ տղաք կ'ընդունուին Միութեան Ապաստանարանը⁴³: Այսպիսով կը վերաշխուժանայ Ապաստանարանը. 9 Սեպտեմբեր 1921 թուակիր նամակով, ԿՎԺն գոհունակութիւն կը յայտնէ որ «հաստատութիւնը հետզհետէ ստանալու վրայ է բաղձացուած կանոնաւորութիւնը»:

Այնուհետեւ, սակայն, եւ մինչեւ փակումը, Ապաստանարանը կը գործէ ոչ-աշխուժ կշռոյթով⁴⁴: Իսկ *Միութիւնը* անհամեմատօրէն քիչ կ'անդրադառնայ Ապաստանարանին: Կարծէք վերջինիս առաքելութեան 'ոսկեդարը' եղած ըլլար 1920-21 շրջանը:

ԱՊԱՍՏԱՆԵԱԼՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԵՒ ԲՆՈՒԹԱԳԻՐ⁴⁵

Ապաստանեալներու թիւ.- ՀՕՄի շրջանին Ապաստանարանը հոգացած էր մինչեւ 150 որբեր ու աղջիկներ: ՀԲԸՄ տնօրինութեան անցնելէ ետք եւ մինչեւ 30 Յունիս 1920, Ապաստարան կ'ընդունուի 58 հոգի, որոնց «մեծամասնութիւնը թուրքերու քովէ հաւաքուած հայուհիներ, որբեր եւ

օտարներու քով իբրեւ գերի ծառայածներ էին: Ասոնցմէ 12 հոգի իրենց ազգականներուն քով եւ 8 հոգի հայ ընտանիքներու քով իբրեւ սպասուի կը տեղաւորուին, 1 նորածին՝ որբանոցը, իսկ 3 այլ «թրքածնունդ նորածիններ» կը մահանան, ու 30 Հոկտեմբեր 1920ի դրութեամբ Ապաստանարանին մէջ կը մնան 34 հոգի: Այնուհետեւ *Միութիւնը* պարբերաբար՝ կը հրատարակէ ապաստանեալներուն անուանացանկը, որ կը հասնի 161ի⁴⁶:

Ապաստանեալներու ծննդավայր.- 161 ապաստանեալներէն 11ը՝ ծնած էին Այնթապ⁴⁷, 10ը՝ Սեբաստիա, 9ական՝ Խարբերդ, Ուրֆա, 8ական՝ Կիրին, Պրուսա, 7ը՝ Քոյի, 6ական՝ Կարին-Էրզրում, Կեսարիա, 5ական՝ Հալէպ, Պերեճիկ, Տէր Զօր, 4ական՝ Աշոտ, Ատափազար, Սեւերէկ, 3ական՝ Իզմիր, Մարաշ, Տիգրանակերտ, Քեմախ, 2ական՝ Ամասիա, Կէլվէ, Հասան Պէյլի, Սվազ, Տարենտէ, Քիլիս, 1ական՝ Ակն, Անկիրի, Ատանա, Ատիաման, Արաբկիր, Բաղէշ, Գանկալ, Քեսապ, Գնճըլար, Եալովա, Եոզկատ, Էսքիշեհիր, Էւերէկ, Կէօքսիւն, Մարզուան, Մասրա, Մերտին, Մուսուլ, Նիյոտէ, Չմշկածագ, Պալըքսիր, Պարտիզակ, Պեհեսնի, Պոլիս, Սամսոն, Սիրիհիսար, Վան, Տէօրթ Եոլ: 5 հոգի չէր գիտեր իր ծննդավայրը:

Ապաստանարանէն առաջ գտնուած վայր.- Ապաստանարանի բնակիչները փրկուած-հասած-ապաւինած-բերուած-դրկուած էին զանազան տեղերէ, ինչպէս՝ Այնթապ (5), Ատանա (3), Ենի Եափան, Եունիէ (1), Թէլ Աֆար (1), Իսկենտէրուն (2), Իտլիպ (1), Հալէպ եւ անմիջական շրջակայք (44), Համա եւ շրջակայք (5 հոգի), Շորաքըլ (1), Մերտին (1), Մումպուր (2), Մուսուլ (1), Նիսիպին (3), Ուրֆա/Սուրու (6), Պաղտատ (4), Պերեճիկ (2), Պէյրուֆ (2), Պոլիս (2), Պրուսա (1), Սեւերէկ (3), Տէր Զօր (20), Տէօրթ Եոլ (2), Րաս Ուլ Այն (1), Րաքքա (1), Քիլիս (5), Քուպպէ Խան (1): Ասոնք եկած էին որբանոցներէ, հայ եւ արաբ քրտիտներէ (նոր աղախին էին), հանրատուներէ (շուրջ 10 պարագայ), թուրք ընտանիքներէ, թուրք-քիւրտ-իսլամ արաբ ամուսիններէ: Անոնցմէ ոմանք փախուստ տուած ու թաքնուած էին Ապաստանարան, ուրիշներ՝ յանձնարարուած էին, կային որ առաջնորդարանէն դրկուած էին, նաեւ՝ ոստիկանատունէն եւն.:

Ընդանեկան պարագաներ.- Ապաստանեալներէն առնուազն 34 հոգին ամուսնացած էր թուրքի, քիւրտի կամ իսլամ արաբի հետ. ոմանք յղի վիճակով կը հասնին ապաստանարան, ուրիշներ՝ զաւակով, ուրիշներ՝ իրենց զաւակը լքած: Ասոնցմէ ոմանց եկրորդ ամուսնութիւնն էր օտար ամուսնութիւնը:

Անուանափոխութիւն.- Ապաստանարան հանգրուանածներէն առնուազն 58ը թրքացուած անուններով ժամանած էր հաստատութիւն: Ասիկա կը խօսի ցուցական ինքնութեան պարտադիր փոփոխութեան մասին:

*Առողջապահութիւն*⁴⁸.- Փետրուար 1920-Օգոստոս 1921 ժամանակահատուածի ընթացքին կ'արձանագրուի առողջական 197

պարագայ, հետեւեալ մանրամասնութեամբ.- Մալարիա/ստամոքսի ցաւ՝ 53⁴⁹, ջերմ՝ 20, տկարութիւն՝ 19, աչքի ցաւ/հիւանդութիւն՝ 9, վերք՝ 8, 7ական՝ պրոնշիթ, փորհարութիւն, 6ական՝ ֆրանկախտ, մորթի հիւանդութիւն, այլեայլ՝ 5, 4ական՝ ծննդաբերութիւն, թեթեւ պարագաներ, երիկամունքի հիւանդութիւն, յօդացաւ, 3ական՝ բորոտութիւն, բոմաթիզմ, կասթրիթ, ականջի ցաւ/հիւանդութիւն, ինֆլուենզա, 2ական՝ արգանդի բորբոքում, հարբուխ, ջղային, սրտի տկարութիւն, իլզիի ցաւ, 1ական՝ անթեսիթ, ուղքի վերք, որթի հիւանդութիւն, ստինգի բորբոքում, իջուածք, colique nephretique, կուրծքի իջուածք, ձեռքի վիրաւոր, բուժիոյ, ամիտալիթիս, կոկորդի ցաւ, էմփեթիքօ:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՆԻԻԹԱԿԱՆ ԿԱՏՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 1920ին Ապաստանարանին համար եղած 7763,5 դրուշ ընդհանուր ծախսին 2489,5ը յատկացուած էր հացի գնման, իսկ սնունդի ընդհանուր ծախսը եղած էր 4854,5 դրուշ: Իբրեւ նախաճաշ, պատսպարեալները կ'ունենային «միշտ թէյ եւ հաց, երբեմն՝ հելվա եւ հաց: Ցերեկները՝ Ֆրանս. Ներգաղթի Վարչութենէն տրուած ապուրը եւ հաց: Իսկ երեկոները միշտ տաք կերակուր, շաբաթը 2-3 անգամ մսեղէն» եւ «առատ հաց»⁵⁰: Հացի ծախսը, ամսական դրութեամբ, կը հոգացուէր Ամերիկեան Նպաստամատոյցին կողմէ, Լեմպլըրթի միջոցով եւ յոյս կար որ «այս կարելոր նպաստը տեսական պիտի ըլլայ»⁵¹, մանաւանդ որ այդպիսի խոստում ստացուած էր:

Յուլիս 1921էն սկսեալ տեղաբնիկ հալէպահայ թէ գաղթական հայեր նուիրատուութիւններ կը կատարեն Ապաստանարան-Աշխատանոցին. ըստ երեւոյթին Մասնաժողովը յաջողեր էր ժողովուրդին ուշադրութիւնը Ապաստանարանին վրայ թեքել⁵²: Ուշագրաւ է որ 1927ին պատսպարանին համար ՀԲԸՄը ծախսած էր 163 Ե.Ո.⁵³:

ԱՇԽԱՏԱՆՈՅԸ (ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾ)

Հաստատութեան գոյառումին երկրորդ գլխաւոր նպատակ հանդիսացած աշխատանոցը Փետրուար 1920ին կը սկսի գործել սահմանափակ հնարաւորութիւններով՝ հումքի ստացումին ուշացման պատճառով: Մասնաժողովը ներկայ անորոշ ու շփոթ ժամանակը նկատի առնելով աւելի յարմար կը նկատէ բաժինին ընդարձակման յետաձգումը, սպասելով ապահովութեան բարելաւումին:

Մարտին՝ կացութիւնը կը մնայ դժուար, քանի որ հաղորդակցութեանց անկարելիութեան պատճառով որբերէն միքանին կարելի չ'ըլլար Միութեան որբանոց, իսկ պատսպարեալներէն ուրիշներ՝ պատշաճ տեղեր դրկել: Իսկ Աշխատանոցը - անապահովութեան բերումով - կը մնայ իր նախկին վիճակով. կիները բուրդ մանելով ու գուլպայ հիւսելով կը զբաղին:

Աշխատանոցի գորգագործական բաժինը կը սկսի աշխուժանալ Դեկտեմբեր 1920էն. այդ թուականին սկսուած 2 գորգեր արդէն աւարտած էին 20 Փետրուար 1921ին⁵⁴: Մարտի կէսերուն 4 գորգագործ աղջիկներուն թիւը կը բարձրանայ 5ի, իսկ աշակերտներունը՝ 6ի: Ապրիլի սկիզբը վարպետ գորգագործներուն թիւը կը բարձրանայ 8ի, մինչ գորգի երկու տեղկեահները կ'ըլլան երեք, իսկ Օգոստոսին՝ չորս: Իրագործում կը նկատուի Յուլիսին աշխատանոցին մէջ գործուած «եաստըք գորգ»ը, որուն վարձատրութիւնը ասելի սուղ էր՝ 100 հանգոյցը՝ 7 փարա:

Աշխատանոցի միւս բաժինը զբաղ էր ձեռագործով: Գորգագործութեան անտեղեակ 8-10 աղջիկներ Ապրիլ 1921ին կանոնատրութեամբ ընթացող ձեռագործի բաժնին մէջ Այնթապի գործ, օյա, քրոշէ շապիկ եւ վարտիք, պրոտէ շապիկ եւ վարտիք եւ ընշուլիէ շապիկ եւ վարտիք, ասեղնագործ շապիկ, ճապկոն, թէլքաշ թաշկինակ կ'աշխատէին⁵⁵:

Ձեռագործներէն մաս մը դուրսէն բերուած եւ վարձքով կ'աշխատուէին, մինչ մնացածը՝ ՀՕՄի դրամագլուխով էր: Երկու աշխատանոցներ մէջ աշխատող վտիտ ձեռքերը անձամբ կը վարձատրուէին իրենց աշխատանքին համար: Հատոյթին մնացեալը կ'երթար ՀՕՄին, որ յանձն կ'առնէ ստանձնել պատսպարեալներու առաւօտեան նախաճաշի ծախսերը՝ 15 Մայիս 1921էն⁵⁶: Մինչ Մասնաժողովը կը մտադրէ գորգագործութեան գործը բոլորովին իր վրայ առնել, քանի որ գորգագործները լաւ վարժուած էին եւ մաքուր ապրանք կը գործէին:

Ձեռագործութիւն կամ գորգագործութիւն չգիտցողները կը մղուէին բուրդ մանելու գործին: Ապաստանարանին մնացեալ միքանին դպրոց կ'երթային, ոմանք անկարող, հիւանդոտ, կոյր կամ ծծմայրեր ըլլալուն գրեթէ չէին մասնակցեր աշխատանքներուն:

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻՆ ՏԵԻՈՂՈՒԹԻԻՆԸ

Զարմանալիօրէն, *Միութիւնը* առանձին գրութիւն չի հրատարակեր Ապաստանարան-Աշխատանոցին մասին, մանաւանդ 1922էն սկսեալ: Այդուհանդերձ, իր պարբերական, պաշտօնական հաշուետուութեանց մէջ յաճախ կ'երեւի ան: Այսպէս, 1923ին, Հ.Բ.Ը.Միութեան 12 հաստատութիւններ հաշուող ցանկին մէջ կը յիշուի ան՝ «Ապաստանարան-աշխատանոց, Հալէպ, աղէտեալ կիներու եւ աղջիկներու յատուկ, 50 պատսպարեալներ» բացատրութեամբ⁵⁷: Միութեան 1923ի տարեկան տեղեկագրին մէջ նոյնպէս կը նշուի ան, ուր՝ «անապատներէ եւ օտար տուններէ հաւաքուած 70ի չափ անտիրական աղջիկներ կը պատսպարուին եւ միեւնոյն ժամանակ կը զբաղին ձեռագործով, գորգագործութեամբ եւ շալագործութեամբ, Հայ Օրիորդաց Միութեան հսկողութեան եւ հոգատարութեան ներքեւ»⁵⁸: 1924ի ամբողջ տետղութեան կը շարունակէ գործել Ապաստանարան-Աշխատանոցը⁵⁹: Ապաստանարան-Աշխատանոցին կ'անդրադառնայ *Սուրիահայ Տարեցոյցը* 1925ին, նշելով

որ ան ունէր 50 պատսպարեալներ⁶⁰: Անոր գործունէութիւնը կը շարունակուի 1926ի ամբողջ տետողութեան իբրեւ՝ Հալէպի «Կանանց Պատսպ.-Աշխատանոց»⁶¹:

Կը թուի թէ 1925ին, ԿՎԺն վերատեսութեան կ'ենթարկէ իր նպաստաբաշխումի քաղաքականութիւնը, տարիքի բերմամբ կ'արձակէ կարետոր թիւով որբանոցայիններ⁶², կը միատրէ շարք մը որբանոցներ՝ տեղէ տեղ մէկտեղելով, հուսկ՝ մնացեալները կը խտացնէ Պէյրութի Քելէկեան որբանոցին մէջ⁶³: Որբանոցներու այս միատեղումի քաղաքականութեան այլ դրսեւորումը կ'ըլլայ ՀԲԸՄ նպաստաբաշխ տարաբնոյթ հաստատութիւններու միացումը: Այսպէս, 1926ին ՀԲԸՄ Հալէպի «Ապուրի Ձեռնարկ»ը կը տեղափոխուի Կանանց Պատսպարան-Աշխատանոց, որով «հարիւրաւոր անօգնական գաղթականներ օրական ծրի ճաշ մը կը ստանան»⁶⁴:

1927 տարեշրջանին, նոր աշխուժութիւն մը կ'արձանագրուի Ապաստանարանին մէջ, երբ 35 պատսպարեալներուն վրայ կ'աւելնան 46 նորեկներ, սակայն նոյնքան մըն ալ կը մեկնին եւ ընդհանուր թիւը կը մնայ անփոփոխ: 1927ին կը շարունակէ գործել աշխատանոցը, ուր «հայուիները կը զբաղին ձեռագործով, գորգաշինութեամբ եւ կարով, օրավարձքի փոխարէն»:

Շատ հաւանաբար, Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցը կը դադրի 1928ին: 1929ի «Հ.Բ.Ը.Միութեան Հիմնարկութիւնները» վերնագրեալ տեղեկատուութեան մէջ չի յիշատակուիր այլեւս Հալէպի Ապաստանարան-Արհեստանոցը: Չի յիշատակուիր նաեւ Դամասկոսինը⁶⁵:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հալէպի ՀԲԸՄ Ապաստանարան-Արհեստանոցը դրսեւորումն էր հայ ժողովուրդի Յեղասպանութեան աղէտը դիմագրաւելու, ամոքելու եւ յաղթահարելու միտող ՀԲԸՄի յառաջացուցած փրկարար ճիգերուն: Այդ ճիգերուն մէկ մասը ունէր հաստատութեանական համակարգի բնոյթ: ՀԲԸՄ Հալէպի Ապաստանարան-Արհեստանոցը կը հանդիսանայ ընդհանրապէս հայութեան եւ ի մասնաւորի ՀԲԸՄի ճիգի դրսեւորում մը՝ ի պատասխան Հայոց Յեղասպանութեամբ յառաջացած մարդկային մեծ տագնապին:

Ապաստանարան-Արհեստանոցը մէկ հանգրուանն ու դրսեւորումը եղաւ որբահաւքի եւ այրիներու ազատագրումի այս աշխատանքին: Աշխատանք, որ շարունակուեցաւ 1920ականներուն եւ 1930ականներուն:

Հաստատութեան կենսագործունէութիւնը դրսեւորումն է համադրական ջանքերու, ուր կը մէկտեղուին մասնակի կարելիութիւնները հայկական միութեանական (ՀՕՄ, ՀԲԸՄ, Հալէպի Առաջնորդարան), անհատական (Ռուբէն Հերեան եւն.), օտար բարեսիրական (Նպաստամատոյց, Կարմիր Խաչ) թէ պետական աջակցութիւնները (Ֆրանսական, ամերիկեան, բրիտանական): Իրենց ճիգին մէջ՝ պատկան մարմինները յաջողեցան

գորաշարժի ենթարկելով ոչ միայն ապահովել աջակցությունը հեռակա վայրերու մէջ ապահով ապրող գաղթահայութեան, այլև ընդգրկել Արհեստանոցին անմիջական շրջապատը:

Հաստատութիւնը ունեցաւ մասնակի արդիւնք, նկատի առնելով յառաջադրանքին խոշորութիւնը եւ կարելիութիւններուն սահմանափակութիւնը: Ան չմնաց տագնապին հետեանքներուն միայն անմիջական լուծումներ գտնելու յառաջադրանքին մէջ, այլ ձգտեցաւ աւելիին՝ արհեստներ ուսուցանելով՝ այդ խլեակները կեանքին եւ ընկերութեան վերահամարկելու:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Լեւոն Չորմիսեան, *Համապարկեր Արեւմտահայ Մէկ Դարու Պատմութեան, Գ. Հտր. 1908-1922*, Պէյրութ, Տպ. Սեան, 1975, էջ 527:
- ² «Անապատի որբերուն եւ հարէմներու հայուհիներուն ազարագրումի գործին եւ Հ.Բ.Ը.Միութեան Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցին համար երախտագիտութեամբ պիտի ընդունուին կամաւոր նուիրատուութիւններ: «Ազարագրումի Հիմնադրամ»ին մասնակցողներէն կը խնդրուի դիմել Կեդր. Ժողովին կամ Տեղ. Մասնաժողովներուն» (Միութիւն, Պաշտօնաթերթ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէ (Եգիպտոս), Նոյեմբեր-Դեկտեմբեր 1919, էջ 89):
- ³ Էդուարդ Մելքոնեան, *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն*, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, Մուղնի Հրատ., 2005, էջ 99-100:
- ⁴ Չորմիսեան, էջ 527:
- ⁵ *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1919, էջ 6:
- ⁶ «Անապատի Որբերը եւ Հարէմներու Հայուհիները», *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1919, էջ 88. նաեւ՝ էջ 84:
- ⁷ Այս ուսումնասիրութեան համար օգտուած ենք ՀԲԸՄ Գահիրէի արխիւին մէջ պահուող Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցին վերաբերող թղթապանակէն: Դժբախտաբար ան պակասաւոր է եւ կ'ընդգրկէ միայն 8 Յունուար 1920-7 Սեպտեմբեր 1921 ժամանակահատուածի գրաւոր նամակագրութիւնը՝ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին ու Հալէպի Մասնաժողովի վարչութեան միջեւ: Օգտուած ենք թղթապանակին մէջ պահ դրուած ամսական նիւթական եւ առողջապահական տեղեկագրերէն: Քննած եւ օգտուած ենք ՀԲԸՄ ատենի պաշտօնաթերթ *Միութիւնի* 1919-1930 շրջանի թիւերէն, *Գործապատում [Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գործապատումը (Պարկերազարդ Վիճակացոյց)*, Գահիրէ, Տպ. ՀԲԸՄիութեան, 1919] եւ Մելքոնեանի վերոնշեալ հատորէն:
- ⁸ ՀԲԸՄ Հալէպի մասնաճիւղը հիմնուած է 1910ին, իր կնիքին թիւն էր 17:
- ⁹ ՀԲԸՄիութեան գործունէութիւնը ներկայացնող *Գործապատում* գրքոյկը էջ 60ի վրայ զետեղած է «Հալէպի Հայ Օրիորդաց Միութեան Ապաստանարանը» բացատրագիրով խմբանկար մը, ուր անցուած է թէ անոր «Հ.Բ.Ը.Միութիւնը կ'օժանդակէ»: Մինչ *Միութիւնի* Մայիս-Յունիս 1919ի թիւին մէջ ան նշուած է իբրեւ

- «ՀԲԸՄ սեփական հաստատություններ» էն մին («Հ.Բ.Ը.Միության Սեփական Հաստատությունները», *Միություն*, Մայիս-Յունիս 1919, էջ 35):
- ¹⁰ «Հ.Բ.Ը.Միությունը Երկրին Մէջ», *Միություն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 9: «Հ.Բ.Ը.Միության Դրամական Նպաստները 14 Ամսուան Միջոցին (Սեպտեմբեր 1918-Հոկտեմբեր 1919)» վերնագրին տակ համառօտ հաշուետուութեամբ մը կը պարզով որ 50466 Եգ. Ոսկիի հասնող ընդհանուր ելքերուն մէջ 250 Եգ. Ոսկի տրամադրուած է «Հարէմներէն որբ, աղջիկ եւ կին ազատագրելու համար» (*Միություն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1919, էջ 68):
- ¹¹ Ռուբէն Հերեան կը համադրէր իր որբահաւաքի գործը Ապաստանարանին հետ, որուն խնդրով խորհրդականն էր Մասնաժողովին:
- ¹² Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի ներկայացուցիչ(“):
- ¹³ Յարութիւն Ա. Քնյ. Եսայեան Հալէպի Առաջն. փոխանորդ՝ 1913-22: Միջանկեալ՝ 1916-18 տարիներուն բանտարկուած է Հալէպի մէջ (Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց*, Ա. Հար., Անթիլիաս, 1980, էջ 293, 302):
- ¹⁴ Մաքրութիւնը պիտի ունենար պարբերական բնոյթ՝ ամէն ութ օրը անգամ մը՝ ճերմակեղէնի լուացք եւ մաքրութիւն:
- ¹⁵ Ամսական 350 Ե.դ. վճարումով: Փետրուար ամսուն իսկ արդէն կը պաշտօնակոչուի տեսչուի մը՝ Կատարինէ Սեֆերեան, 2,5 օսմ. ոսկի ամսականով:
- ¹⁶ Ամսական 150 Ե.դ. վճարումով: Փետրուար ամսուն իսկ արդէն կը պաշտօնակոչուի Սեֆերեանի քոյրը՝ կէս օսմ. ոսկի ամսականով: Տեսչուին եւ օգնականուին կը ճաշեն պատասպարեալներուն հետ եւ «միշտ ներսը կը մնան»:
- ¹⁷ Ամսական 250 Ե.դ. վճարումով:
- ¹⁸ Ամսական 250 Ե.դ. վճարումով:
- ¹⁹ Ամսական 200 Ե.դ. վճարումով: Խոհարարուի, սակայն, Փետրուար ամսուան համար չէ պաշտօնակոչուած մէկը, ուստի «պատասպարեալներէն մին ստանձնած է այդ գործը»:
- ²⁰ Բժշկական խնամքը կը կատարէ Տքթ. Յ. Գլըճեան, որ աւելի ետք, Մայիս 1920ին, եռամսեայ իր այցելութիւններուն համար կը կատարէ որոշ գանձում մը: Գլըճեան կը շարունակէ Ապաստանարանին բժշկական վերահսկումը մինչեւ Դեկտեմբեր 1920, այնուհետեւ՝ Տքթ. Երուանդ Խրլորեան:
- ²¹ Ասիկա պիտի ընդգրկէր «սովորական ստացուած ապուրէն զատ կերակուրի ծախքը»:
- ²² Յունուար-Փետրուար 1920ին, 1000 Եգ.Ո. կը դրկուի Հալէպ՝ Միության Ապաստանարանին եւ այլ նպատակներու (*Միություն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 4):
- ²³ Որ կ'արժէ 1637 Եգ. Ղ.:
- ²⁴ *Միություն*, Յունուար-Փետրուար 1918, էջ 9:
- ²⁵ Ուր պատասպարուած էին շուրջ 400 հոգի՝ իրենց երկսեռ փոքրիկներով. յետագային, այս թիւը կը նուազի շուրջ 90ի: Այրիանոցը վրանաշարք մըն էր, տեղաւորուած որբանոցին առընթեր, զատ շրջափակով, սեփական աշխատանոցով (հսկիչ՝ Ատեմ[իս] Սանտալճեան), ուր վճարումով կ'աշխատէին, հաւաքատեղիով՝ ընդարձակ վրանի մը մէջ, ունէր քահանայ (Յակոբ Քնյ. Մավեան), խմբապետուի, վերակացու (Ներիկ Սեֆերեան) ուստիկան,

պահակներ եւ յատուկ պաշտօնէութիւն (որ կը հոգար անոնց պէտքերը եւ կը հսկէր առողջութեան, աշխատութեանց եւ բարոյականին) (*Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1918, էջ 90. նաեւ, նոյն՝ Յունուար-Փետրուար 1919, էջ 12. նաեւ՝ «Հ.Բ.Ը.Միութեան Բօր-Սայիտի Գաղթավայրի Հաստատութիւնները», *Գործապատում*, էջ 53, 16. նաեւ՝ «Այրիանոց-Աշխատանոց», *Յուշարար*, Յունուար-Փետրուար 1919, էջ 12):

²⁶ *Միութիւն*, Մայիս-Յունիս 1919, էջ 35. նաեւ՝ *Գործապատում*, էջ 16:

²⁷ Մերմերլի Թաղ հաստատուած այս գործատունը ունէր երկու սրահ եւ վեց սենեակ, ուր կը գործէին գուլպայի եւ գորգի արհեստանոցները: Գուլպայի արհեստանոցը կ'աշխատէին 12, իսկ գորգի 20 տեղակահներուն վրայ՝ 40-50 այրիներ («Հ.Բ.Ը.Միութեան Ատանայի Գործատունը», *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1920, էջ 10): Հոս հիստուած են Պօղոս Նուպար, Զօրավար Անդրանիկ, Ներգաղթ եւ Լոյտ Ճորճ անուանածօն գորգեր (Մելքոնեան, էջ 101):

²⁸ *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1924, էջ 93:

²⁹ «Ինքնօգնութեան Հանգանակութեան Պատասպարան-Աշխատանոցները Պէրյուֆի եւ Հալէպի Մէջ», *Միութիւն*, Մայիս-Յունիս 1925, էջ 35:

³⁰ Ուր կը պաշտօնավարէր հալէպահայ կրթական մշակ Գրիգոր Պողարեան (Գրիգոր Պողարեան, *Վերջին Խօսքեր (Հուսկ Բանք) Ուղղուած Հալէպի Կրթասիրաց Վարժարանի Աարտական Կարգերուն եւ Փունջ Մը Խմբագրական էջերս*, Պէրյուֆ, Տպարան Ատլաս, 1975, էջ 7):

³¹ «Հալէպի Արհեստանոց-Որբանոցը», *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1921, էջ 66:

³² *Միութիւն*, Յուլիս-Օգոստոս 1922, էջ 55:

³³ *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1922, էջ 71:

³⁴ Մէջբերուած՝ Մելքոնեան, էջ 100:

³⁵ Ըստ Էզաճեանի 30 Հոկտեմբեր 1920ի տեղեկագրին:

³⁶ Ասիկա կը թարգմանուէր նաեւ տեսչուհիին եւ օգնականուհիին Ապաստանարանը գիշերելով ու հսկելով ընդհանուրին:

³⁷ Ասիկա Յունիս 1920էն ետք ՀԲԸՄիութեան ծախքերով կը պատրաստուի:

³⁸ Հացագինի վճարումը անընդմէջ կը շարունակուի գէթ մինչեւ Յունիս 1921:

³⁹ 36 անկողին, 39 վերմակ, 20 բարձ, 60 ծածկոց, 10 գուլպայի մեքենայ, 1 կարի մեքենայ ոտքով, 1 մանածի ճախարակ, 2 թէլ փայթելու գործիք, 2 պղնձեայ խալկին, 4 պղնձեայ դոյլ, 1 պղնձեայ լուացքի տաշտ, 5 փայտէ նստարան, 2 մեծ սեղան, 1 փոքր սեղան, 3 երկաթէ դոյլ՝ ջրհորի, 1 ջրհորի չուան, 1 իւղի փոքր կարաս, 8 բուրդի սանր, 1 փայտէ սնտուկ, 1 փայտէ պանկելու թախտ, 16 կերակուրի պնակ, 12 չինքոյէ թէյի գաւաթ, 2 չինքոյէ շերեփ, 1 թէյաման, 1 դանակ, 1 կախուելիք լամբար, 1 ֆանուս, 1 կրակի համար երկաթէ ակիշ, 1 ունելի, 1 պատի ժամացոյց, 15 խսիր, 3 թելիսէ չուալ, 2 աթոռ, 46 դգալ, 10 բուրդ ման., 50 գուլպայ հիւսելու ճաղ, 4 ծագար քարիւղի համար եւ թիթեղներ, 2 չինքոյէ դոյլ, 4 զանազան կտորներ:

⁴⁰ Մելքոնեան, էջ 100:

⁴¹ ՀՕՄ ճգնաժամը կը փրկէ դիմելով Ամերիկեան Կարմիր Խաչին, որ աւելի քան անգամ մը կը տրամադրէ ճերմակեղէն, հագուստ եւ կօշկեղէն:

- ⁴² Էգաճեան իբրեւ բ. ատենապետ կը շարունակէ ստորագրել նամակները նաեւ 1920 Հոկտեմբերին, որմէ ետք իբրեւ բ. ատենապետ նամակները կը ստորագրէ Սամուէլեան:
- ⁴³ Ասոնցմէ 7ը քղեցիներ էին, որոնք ազգականներ ունենալով Մ. Նահանգներու մէջ, եւ ասոնցմէ ոմանց ճանապարհաճախսը հասած ըլլալով Ամերիկա կը դրկուին, իսկ երկու կեսարացիք իրենց եղբայներուն եւ ազգականներուն քով կը դրկուին (*Միութիւն*, Յուլիս-Օգոստոս 1921, էջ 57):
- ⁴⁴ Այրուհանդերձ, առկայ գրեթէ բոլոր տուեալները կը խօսին ամսական միջին հաշուով ոչ-աւելի քան 30-50 ապաստանեալներու մասին: Հաստատութեան վերջին տարին՝ 1927ին, ապաստանեալներու թիւը 39 էր (*Մեքլոնեան*, էջ 101):
- ⁴⁵ Տուեալները հիմնուած են Յունուար 1920-Սեպտեմբեր 1921 երկարող տեղեկագրերուն վրայ:
- ⁴⁶ «Տուցակ Հ.Բ.Ը.Միութեան Հալէպի Ապաստանարան-Աշխատանոցի Պատասպարեալներո», *Միութիւն*, Մայիս-Յունիս, 1920, էջ 40. նաեւ՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1920, էջ 78. նաեւ՝ Յունուար-Փետրուար 1921, էջ 15. նաեւ՝ Մարտ-Ապրիլ 1921, էջ 30. նաեւ՝ Մայիս-Յունիս 1921, էջ 48. նաեւ՝ Յուլիս-Օգոստոս 1921, էջ 57. նաեւ՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1921, էջ 80:
- ⁴⁷ Տեղանունները կու տանք՝ ըստ արձանագրութեան:
- ⁴⁸ Հիւանդութիւններուն համար օգտագործած ենք տեղեկագրերուն եզրոյթները:
- ⁴⁹ Մալարիայի պարագաները այսքան շատ չեն, սակայն անոնց բուժումը կ'երկարի ատելի քան ամիս մը, որով ամսական առողջապահական ցանկերուն մէջ չապաքինած պարագաները դարձեալ արձանագրուած են:
- ⁵⁰ Բացառաբար, Ապաստանարան բերուած հինգամսեայ փոքրիկին համար միայն ամէն օր կաթ կ'առնուի:
- ⁵¹ Յետագայ տեղեկագրերը կը հաաստեն, որ խոստումը կը յարգուի եւ 1920 Մարտին՝ 2590, Ապրիլին՝ 2590, Մայիսին՝ 2128, Յունիսին՝ 2100 դրուշ կը ստացուի Նպաստամատոյցէն:
- ⁵² Ի դէպ, 1920 Փետրուար ամսու գնումներու եւ բոլոր ծախքերու հոգը կը ստանձնէ խնամակալ Մանուկ Սահակեան:
- ⁵³ «Պատասպարան-Աշխատանոց (Հալէպ)» *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1928, էջ 71-2:
- ⁵⁴ Այս երկու գորգերուն հանգոյցներուն ընդհանուր գումարը եղած է 961,792 (1768 կարգ եւ 544 թէյ): Իւրաքանչիւր 100 հանգոյցի վարձք գանձուած է 6,5 փարա: Երկու գորգերուն իբրեւ աշխատավարձք գանձուած 9 օսմ. ոսկիին կէսը կը տրուի գորգագործներուն, միւս կէսը՝ ապաստանարանին կարիքներուն:
- ⁵⁵ Տեղեկագրերուն եզրոյթները պահպանած ենք:
- ⁵⁶ Յունիս ամսուան համար ՀՕՄը 1207 դրուշ կը վճարէ նախաճաշի համար, իսկ Յուլիս 23ին կը ծրագրէ երեկոյթ սարքել ի նպաստ Ապաստանարանին:
- ⁵⁷ *Միութիւն*, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1923, էջ 72:
- ⁵⁸ «Տեղեկագիր Գործադիր Ժողովի 1923 Տարեշրջանի. Յառաջաբան», *Միութիւն*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1924, էջ 92-93:
- ⁵⁹ «Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան 1924 Տարեշրջանի Հաշիւները», *Միութիւն*, Յունուար-Փետրուար 1925, էջ 5:

-
- ⁶⁰ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, «Հ.Բ.Ը.Միութեան Գործունէութիւնը», *Սուրիահայ Տարեցոյց, 1925, Բ. Տարի, Հալէպ, Տպ. Արաքս, 1925, էջ 281*:
- ⁶¹ «Միութեան Սեփական Եւ Նպաստընկալ Հաստատութիւնները 1927 Յունուար 1ին», *Միութիւն, Յունուար-Փետրուար 1927, էջ 12*:
- ⁶² Ասոնք՝ որբանոցին մէջ արհեստներու տիրացած ըլլալով, իրենց օրապահիկը կրնային շահիլ: Արդարեւ, Հալէպի արհեստանոցին մէջ մինչեւ 1922 Հոկտեմբեր երեք մասնագիտութիւն կը սորվեցուէր՝ կօշկագործութիւն, ատաղձագործութիւն եւ «ջօֆէորութիւն» (*Միութիւն, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1922, էջ 77-78*), ատիլի ետք նաեւ՝ դերձակութիւն, մեքենագիտութիւն, երկաթագործութիւն, քարկոփութիւն, լուսանկարչութիւն, սափրիչութիւն (*Միութիւն, Յունուար-Փետրուար 1923, էջ 3*): 1923ին արհեստանոցի 91 շրջանաւարտներէն 31ը կօշկակար էին, 17ը՝ դերձակ, 4ը՝ երկաթագործ, 4ը՝ շօֆէոր, 19ը՝ ատաղձագործ, 4ը՝ կահագործ, 8ը՝ մեքենագործ, 2ը՝ փորագրիչ, 1ը՝ քանդակագործ, 1ը՝ խաղախորդ [պահպանած ենք տեղեկագրերուն եզրոյթները] («Հալէպի Կիլիկեան Որբ.-Արհեստանոցը», *Միութիւն, Յունուար-Փետրուար 1924, էջ 4*):
- ⁶³ 1925 Փետրուարին կը փակուի Հալէպի Արհեստանոց-Որբանոցը ուր մնացած 32 սաները կը փոխադրուին Պէյրութի Քելէկեան որբանոցը («Հալէպի Արհեստանոց-Որբանոցը», *Միութիւն, Յունուար-Փետրուար 1925, էջ 2*): 1926ին Հալէպի Կիլիկեան Որբանոց-Արհեստանոցի սաներ կը փոխադրուին Հայաստան (*Միութիւն, Յունուար-Փետրուար 1926, էջ 34*) եւ ան կը փակուի Յուլիս-Սեպտեմբեր 1926ին (*Միութիւն, Յուլիս-Օգոստոս 1926, էջ 89*): Նոյն շրջանին կը փակուի նաեւ Երուսաղէմի Արարատեան Որբանոցը, ուր մնացած 129 որբերը, 15 Սեպտեմբեր 1926ին Եաֆայէն, ծովու ճամփով կը փոխադրուին Պէյրութ, որով «այժմ Միութեան հոգատարութեան տակ գտնուած բոլոր որբերը, թիով մօտաւորապէս 500, համախմբուած են մէկ յարկի տակ» («Փակում Երուսաղէմի Արարատեան Որբանոցի», *Միութիւն, Յուլիս-Օգոստոս 1926, էջ 83*):
- ⁶⁴ *Միութիւն, Յունուար-Յունիս 1926, էջ 71. նաեւ նոյն՝ 1928, թիւ 125, էջ 71-2*:
- ⁶⁵ *Միութիւն, Յունուար 1929, թիւ 127, էջ 106*:

**The AGBU Shelter-Home in Aleppo
(1919-1927)
(Summary)**

Antranik Dakessian
adakessian@haigazian.edu.lb

Between 1915 and 1917, during the Armenian Genocide, a number of Armenian women and teenage girls were ill-treated and raped on the deportation roads and in the desert camps. Others were kidnapped and still others were taken to houses where they were treated as slaves and physically molested. A small number of women were forced to trade their bodies for survival. The fate of these abused women and girls was critical and needed to be addressed as soon as WWI ended and the Allied Forces took control of the area.

As early as 1918 shelter houses were established in different localities like Aleppo, Damascus, Baghdad and Alexandria. Some of these were run by the American Near East Relief Society and other non-Armenian philanthropic groups.

The paper studies the Aleppo Shelter-Home. It was founded by the *Oriortats Miyutiun* in June 1919, sponsored by the AGBU and, as of January 1920, owned by the AGBU but administered and managed by the said *Miyutiun*.

The paper is based on the extensive (yet short-lived) correspondence and reporting, which existed between the shelter home and the AGBU Cairo center, limited archival materials, a few published articles in the official AGBU periodical, and notes. The paper examines the inception and mission of the Shelter-Home, as well as life in it, those who were accepted, the process of their rehabilitation, the care given, the crafts taught (so that the women could make a living) and their eventual reintegration into the Armenian space at large.